ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ՏՆՕՐԵՆ

«05» 12 2023թ. № 08/ԼԱ/ - 1375

«ՏՆ-Լիդեր» ՍՊԸ-ի տնօրեն
տիկին Ս. Շանոյանին

Հարգելի տիկին Շանոյան

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՏՆ-Լիդեր» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի նոյեմբերի 10-ին կնքված Պետության կարիքների համար ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-23/21 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ կատարման վերջնաժամկետը լրանում էր 2023 թվականի նոյեմբերի 17-ին:

Ձեր կողմից գրություն էր ստացվել պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգելու համար, որին մենք համաձայնվել ենք Ձեր tnlider@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկելով պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգելու մասին պայմանագրի N 1 համաձայնագրի նախագիծը, որով պայմանագրի կատարման վերջնաժամկետ էր սահմանվել 2023 թվականի դեկտեմբերի 10-ը, սակայն համաձայնագրի Ձեր կողմից ստորագրված և կնքված տարբերակը այդպես էլ չենք ստացել:

Ուստի, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 կետը՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, ինչպես նաև պայմանագրի 2.1.7 կետը՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում եմ, որ պայմանագիրը միակողմանի լուծվում է և Ձեր կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը (պայմանագրի ապահովում) ներկայացվում է ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ:

Հարգանքով՝
Տնօրենի պարտականությունները կատարող

Սիմոն Պապյան

Գնումների համակարգման բաժին
Գրիգոր Մկրտչյան, հեռ. 010 57 62 80